Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստան, Երևան ք., Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-79

Թիվ 84/գիտ. 12. 06. 2012 թ.

Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի
վարիչ Հասմիկ Հովհաննիսյանին

Հարգելի Հ. Հովհաննիսյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի Կոնֆուցիուսի ինստիտուտը և Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը 2012թ. նոյեմբերի 6 և 7-ին կազմակերպում են միջազգային գիտաժողով՝ **"Հայաստան և Չինաստան. 20-ամյա համագործակցություն քաղաքականության, տնտեսագիտության, լեզվի և մշակույթի ոլորտներում"** Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև հաստատված դիվանագիտական հարաբերությունների 20-ամյակի առթիվ:

Գիտաժողովի շրջանակներում քննարկվող խնդիրներն են՝

1. Հայաստանում չինագիտության ընթացիկ կարգավիճակը, չինարենի ուսուցման մեթոդները և ժամանակակից տեխնոլոգիաները, ԱՊՀ երկրների փորձը:
2. Չինաստան – ԱՊՀ միջմշակութային և պատմական կապեր:
3. Հայաստանի և Չինաստանի մշակույթի ոլորտում 20 տարվա համագործակցություն. զարգացման հեռանկարները:

Կից Ձեզ ենք ուղարկում գիտաժողովի տեղեկատվական նամակները (3 թերթ):

Հայցում ենք ձեր աջակցությունը գիտաժողովի աշխատանքներին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցության գործում:

Հարգանքով՝ *Կ. Վարդանյան*

Չինարենի՝ որպես մասնագիտության և որպես լրացուցիչ լեզվի ուսուցման հիմնական ուղղությունները.

Սեկցիա 1: Չինարենի ուսուցման տեխնոլոգիաները

1.1 Չինարենի ուսուցման առանձնահատկությունները ուսումնառության նախնական փուլում:
1.2. Տարբեր տարիքային խմբերում ուսուցման համար հատուկ մշակված միջոցների օգտագործում (ինտերակտիվ մեթոդների կիրառում):
1.3. Դասագրքերի տեղեկատվական-դիդակտիկ գործառույթները օտար լեզուների ուսուցման ընթացքում:
1.4. Հեռակա ուսուցման տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ:
1.5. Ինքնուսուցման ժամանակակից հարթակ: Չինարեն լեզվի ինքնուրույն ուսուցման մեթոդաբանական հիմք:

Սեկցիա 2. Չինաստան– ԱՊՀ միջմշակութային և պատմական կապեր

2.1. «Մետաքսի մեծ ճանապարհ». ավանդույթների և միջազգային հարաբերությունների զարգացման հեռանկարներ:
2.2. Մշակութային-ճանաչողական տուրիզմ. Չինաստանի և արտասահմանյան երկրների զարգացման փորձը:
2.3 Կոնֆուցիանիզմը որպես միջմշակութային երկխոսության հիմք:
2.4 Չինաստանի գրական ավանդույթները օտարերկրացիների աչքերով:

Սեկցիա 3. Չինաստանը և Հարավային Կովկասը

Կլոր սեղան – Հայաստանի և Չինաստանի 20 տարվա համագործակցությունը մշակույթի ոլորտում. զարգացման հեռանկարները:

Գիտաժողովին մասնակցելու են հրավիրվում Կոնֆուցիուսի ինստիտուտների տնօրեններ, գիտնականներ, մշակույթի, գիտության և կրթության ոլորտի գործիչներ, պետական և միջազգային հասարակական և քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գիտաժողովը տեղի կունենա Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը, անգլերենը և չինարենը:

Հոդվածները և թեզերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝
Թղթի ֆորմատ-A4, MS Word ծրագրով, միջտողային ինտերվալ՝ 1, էջի լուսանցքները՝ վերևից – 2 սմ, ներքևից – 2.5 սմ, ձախից – 2 սմ, աջից – 2 սմ, պարբերության սկիզբը՝ 1սմ լուսանցքից աջ, Sylfaen, տառաչափը՝ 10:
Հոդվածի սկզբում դրվում է վերնագիրը /գլխատառերով/, հաջորդ տողում՝ հեղինակի անուն ազգանունը /գլխատառերով/, հոդվածի վերջում նշել հեղինակի գիտական

աստճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Օգտագործման աղբյուրների ամբողջական ցանկը տրվում է աշխատանքի վերջում՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ անվան տակ:

Գիտաժողովի մասնակցության հայտը, զեկույցի (ելույթի) թեման և թեզերը անհրաժեշտ է ուղարկել մինչև 2012թ. հուլիսի 1-ը հետևյալ հասցեներով՝

- 0002, Հայաստան, Երևան, Թումանյան փողոց 42, ԵՊԼՀ-ի Կոնֆուցիուսի ինստիտուտ, էլ-փոստ՝ confucius@brusov.am
- 0019, Հայաստան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/գ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, էլ-փոստ՝ h-aghavni@orient.sci.am (սեկցիա 3)

Գիտաժողովի նյութերը կտպագրվեն առանձին ժողովածուի տեսքով:

Գիտաժողովի կազմակերպչական հարցերի և մասնակցության պայմանների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝

- Կոնֆուցիուսի ինստիտուտ
  Հեռ. 53-17-71, 53-22-39
  Ֆաքս 53-17-71
  confucius@brusov.am
- ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ (Սեկցիա 3)
  Հեռ.54-70-40
  Ֆաքս 58-33-82
  h-aghavni@orient.sci.am

Համանախագահներ

Գայանե Ռաֆֆիի Գասպարյան	ԵՊԼՀ ռեկտորի պաշտոնակատար
Ռուբեն Արամի Սաֆրաստյան	ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

Կազմկոմիտե

Լուսինե Հրանտի Ֆլջյան	ԵՊԼՀ պրոռեկտոր՝ գիտության և միջազգային կապերի գծով
Նաիրա Լեոնիկի Գրիգորյան	ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտի տնօրեն
Կարինե Կարենի Ելոյան	ԵՊԼՀ գիտքարտուղարի պաշտոնակատար